Կարգապահական գործ թիվ ԿԳ-15164

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 354-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ № ԿԳ/214-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԵՐՎԱՆԴ ՎԱՐՈՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ նաև **Պալատ**) խորհուրդը (այսուհետ՝ նաև **Խորհուրդ**), ի դեմս խորհրդի անդամներ՝ Մարտուն Փանոսյանի (նախագահող), Սիմոն Բաբայանի, Լիպարիտ Սիմոնյանի, Նելլի Հարությունյանի, Կարապետ Աղաջանյանի, Կարեն Մեժլումյանի և Հարություն Հարությունյանի,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ դիմող փաստաբան Լիանա Գրիգորյանի ներկայացուցիչ, փաստաբան Թամարա Բաղդասարյանի և պատասխանող փաստաբան Երվանդ Վարոսյանի,

Երևան քաղաքում քննության առնելով փաստաբան Երվանդ Վարոսյանին (արտոնագիր № 776) **(այսուհետ նաև՝ Պատասխանող)**, կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

<u>1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքերը.</u>

Փաստաբան Լիանա Գրիգորյանը (**այսուհետ նաև Դիմող**) դիմելով Պալատ՝ հայտնել է հետևյալը.

«ԶԼՄ-ների և Facebook սոցիալական ցանցում ամենաքննարկվող թեման փաստաբաններ Լուսինե Սահակյանի և Երվանդ Վարոսյանի՝ Վերաքննիչ դատարանում տարած հաղթանակն էր:

Հանրային պաշտպան Թամարա Բաղդասարյանը շնորհավորել է փաստաբաններին հաղթանակի կապակցությամբ, նշելով, որ գործի հանգամանքներն իրեն շատ ծանոթ են. - «Այնպիսի տպավորություն է, որ հանրային պաշտպանի գրասենյակում այն քննարկվել է»: Որին ի պատասխան փաստաբան Ե. Վարոսյանը պատասխանել է. «Առաջին ատյանում հանրային պաշտպան է մասնակցել ..... գնահատական չտամ», նաև նշել է, որ «քննարկում է Ա.Ավանեսյանի հետ ՀՀ փաստաբանների պալատ դիմելու և կարգապահական պատասխանատվություն ենթարկելու մասին հարցը»»:

Լիանա Գրիգորյանը նշել է նաև, որ *«Ե.Վարոսյանն է խախտել*

փաստաբանի վարքագծի կանոնագրքի 5.2.1 կետի (1) ենթակետը և 5.2.1 կետի (3) ենթակետը..»:

Լիանա Գրիգորյանը ներկայացրել է xnews.am-ի հրապարակման հետ կապված հետևյալ տեղեկությունները՝

*«06.07.2015 թվականին ժամը 18:02-ին xnews.am-ում հրապարկվել է մի նյութ «Փաստաբաններն իրարից հաղթանակներ են գողանում» վերնագրով: Րոպեներ անց 18:15 րոպեին Facebook-ի օգտատեր Ani Harutyunyan-ը նյութը տեղադրել էր ARMENIAN LAWYERS խմբում՝ «Փաստաբաններ սիրուն չի» վերնագրով: Նյութին հավանություն էին տվել մի շարք անձինք, այն թվում՝ նաև փաստաբաններ: Կատարվել էին մեկնաբանություններ: Նյութի տեղադրումից մեկ ու կես անց ժամը 19:51 րոպեին Երվանդ Վարոսյանն իր facebook-յան էջում կատարել էր հետևյալ գրառումը. «**Կարելի է միայն հպարտանալ նրանով, որ քո դեմ որոշ չորքոտանիներ ճղճիմ հոդվածներ են պատվիրում (հատկապես պնդուկ ուղեղով չորքոտանիները): Դա նշանակում է, որ դու ճիշտ ուղու վրա ես**»:*

*Այնուհետև իր գրառման տակ մեկնաբանություն էր գրել. - «**Մեկ էլ կայֆ ա, որ քեզնից հղիներով հավաքվում ու նյութի տակ լայքադրսևորվում են)))**»:*

Համադրելով «Փաստաբաններն իրարից հաղթանակնե՞ր են գողանում» վերնագրով նյութի բովանդակությունը, հրապարակման և ARMENIAN LAWYERS խմբում նրա տեղադրման ժամանակահատվածը և Երվանդ Վարոսյանի Facebook էջում կատարած գրառման բավանդակությունը, գրառման ժամանակահատվածը՝ գտնում եմ, որ Երվանդ Վարոսյանի այս գրառումն ուղիղ կապ ունի հրապարակված նյութի, ինչպես նաև նյութի տակ հավանություն տված անձանց հետ:

Նշեմ, որ ես որևէ կապ չունեմ «Փաստաբաններն իրարից հաղթանակնե՞ր են գողանում» հրապարակման հետ: Սակայն գտնում եմ, որ Պալատի խորհրդի անդամ, փաստաբան Երվանդ Վարոսյանը իր գրառմամբ և մեկնաբանությամբ խախտել է Փաստաբանի վարքագծի կանոնագրքի դրույթները: Փաստորեն սեփական կարծիք արտահայտելու, այն է գրառման տակ հավանելու համար, ըստ Երվանդ Վարոսյանի՝ «Մեկ էլ կայֆ ա, որ քեզնից /հավանաբար նկատի ունի իրենից/ հղիներով հավաքվում ու նյութի տակ լայքադրսևորվում են»:

Իր դիմումի եզրափակիչ մասում, Լիանա Գրիգորյանը խնդրել է Երվանդ Վարոսյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության:

Լիանա Գրիգորյանն իր դիմումի մեջ, որպես հետգրություն նշել է՝ *«Վստահ եմ, որ այդ խոսքերն ինձ են ուղղված, քանի որ ես էի խնդրել պալատի մամուլի խոսնակին ARMENIAN LAWVERS Երվանդ Վարոսյանի և իմ երկխոսությանը ներկայացնել հանրությանը: Ես կայքի ընտրության հետ կապ չունեմ, բայց հոդվածից պարզ էր, որ ես եմ հոդվածի հեղինակը:*»:

<u>2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին Պալատի նախագահի որոշումը.</u>

2015 թվականի օգոստոսի 12-ին Պալատի նախագահի կողմից կայացվել է «Փաստաբան Երվանդ Վարոսյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու մասին» թիվ 296-Ա/ԿԳ-15164 որոշումը, համաձայն

որի որոշվել է.

« 1. Փաստաբան Երվանդ Վարոսյանի (արտոնագիր 776) նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ՝ Կանոնագրքի 2.2.3 և 5.2.1 (1) ենթակետերի խախտման հատկանիշներով (կարգապահական գործ թիվ ԿԳ-15164):

2. Նշված կարգապահական վարույթով դիմող ճանաչել ԼՂՀ փաստաբան Լիանա Գրիգորյանին:

3. Լիանա Գրիգորյանի դիմումը՝ Կանոնագրքի 5.2.1 (3) ենթակետի հիմքով փաստաբան Երվանդ Վարոսյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը մերժել՝ կարգապահական վարույթ հարուցելու հիմքի բացակայության պատճառով:...»:

3. Դիմողի և Պատասխանողի բացատրությունները

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Դիմողը նախապատրաստողին է ներկայացրել գրավոր բացատրություններ, որոնք, ըստ էության, դիմումում նշված տեղեկություններն են պարունակում:

Պալատի խորհրդի նիստին ներկայացել է Դիմողի ներկայացուցիչ փաստաբան Թամարա Բաղդասարյանը, ով պնդել է դիմումում շարադրված դիրքորոշումը:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունը

Պատասխանող Երվանդ Վարոսյանը նախապատրաստողին որևէ բացատրություն չի տվել:

Խորհրդի նիստի ժամանակ Երվանդ Վարոսյանը, չնայած հրաժարվել է բացատրություն տալուց և որոշ հարցերին պատասխանելուց, այնուամենայնիվ որոշ տեղեկություններ հայտնել է:

Երվանդ Վարոսյանի հարց ու պատասխանի մեջբերում (խորհրդի նիստի ժամանակ)՝

Խորհրդի անդամ Կարեն Մեժլումյան- *Ես Ձեզ ընկերանալու հայտ տվեցի, պարոն Վարոսյան:*

Երվանդ Վարոսյան- *Շնորհակալություն: Ես պարոն Վարոսյանի հետ էդ հարցը կքննարկեմ;*

*****

Երվանդ Վարոսյան- *ասեմ, որ ձեր հարցերին չեմ պատասխանելու, ոչ ձեր ժամանակը խլելու ցանկություն ունեմ, ոչ բան.*

Խորհրդի անդամ Նելլի Հարությունյան- *երկու հարց ունեմ, ամենակարևոր հարցեր.*

Երվանդ Վարոսյան- *Դուք հարց կտաք ինձ, էս գրառումը դուք եք գրել, թե՝ ոչ.*

Նելլի Հարությունյան- *այո.*

Երվանդ Վարոսյան- *պատասխանեմ, չեմ պատասխանի, մեռնեմ*

օրենքին.

Նելլի Հարությունյան- *դա էլ է պատասխան.*

Երվանդ Վարոսյան- *Եթե դուք եք գրել, արդյոք նկատի եք ունեցել հոդվածներ ասելով այն հոդվածը, էտ էլ կարող եք հարցնել, պատասխան- չեմ պատասխանում: .....*

*****

Երվանդ Վարոսյանը ներողություն խնդրելով խորհրդից, ցանկություն է հայտնել հեռանալ խորհրդի նիստից, պատճառաբանելով, որ չի ցանկանում հարցերին պատասխանել:

Դիմողի ներկայացուցիչ Թամարա Բաղդասարյան (ուղղված Երվանդ Վարոսյանին)- *Եթե թույլ կտաք մի հայտարարություն, քանի որ հրաժարվում եք, հարցերին պատասխանելուց: Դրանից հետո ձեր իրավունքն է, կարող եք օգտվել ձեր իրավունքից պարոն Վարոսյան:*

Ինչպես նշեցիք հրաժարվում եք հարցերին պատասխանելուց: Ես ցանկանում եմ անդրադառնալ մինչ այդ կատարված հրապարակման այն մասին, որ մասնակցել է հանրային պաշտպան գործով, գնահատականներ տալ չեմ ցանկանում և այլն, էդ բնույթի հրապարակմանն եմ ցանկանում անդրադառնալ, որը ևս կատարվել է Ձեր լուսանկարով և Երվանդ Վարոսյան անուն ազգանունով օգտատերի կողմից: Ես որպես էդպիսին, քանի որ ձեր կողմից անդրադարձ է կատարվել հանրային պաշտպանի ինստիտուտին և հանրային պաշտպանի աշխատանքին.

Երվանդ Վարոսյան- *Չէ ասեմ ինչա, ուզումա ասի, ես արագ ասեմ.*

Թամարա Բաղդասարյան- *Իմ փոխարեն մի ասեք, ես կասեմ.*

Երվանդ Վարոսյան- *թույլ տվեք, եթե սխալվեմ, կասեք սխալվում ես: Ասումա ընդեղ հետո սենց միտք էլ եք ասել, որ վստահորդիս հետ քննարկում եմ կարգապահականի դիմելու հարցը ու ձեր վստահորդը հետո դիմելա: Ակնհայտ ա, որ էդ օգտատերը դուք եք: Պատասխանեմ, որ մեկ մեկ ես գրում եմ ֆեյսբուքում.*

Թամարա Բաղդասարյան- *Այսինքն ընդունեցիք, որ օգտատերը դուք եք.*

Երվանդ Վարոսյան- *երբեմն ես ֆեյսբուքում գրում եմ էդ օգտատերի անվան տակ:*

Այս նախադասությունից հետո, Երվանդ Վարոսյանը հեռացել է խորհրդի նիստերի դահլիճից:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

<u>4. Պալատի կարգապահական վարույթի գործ նախապատրաստող անձի եզրակացությունը.</u>

Կարգապահական գործը հանձնվել է Պալատի կարգապահական գործ նախապատրաստող անձ Հունան Բաբայանին **(այսուհետ նաև՝ Նախապատրաստող)**, որը 2015 թվականի հոկտեմբերի 16-ին կազմել է եզրակացություն (**գ.թ. 83**), ըստ որի.

«…Հիմք ընդունելով Վարույթի կարգի 22-րդ կետը, ապացույցների հետազոտման և գնահատման արդյունքում, գտնում եմ, որ.

Դիմող Լ.Գրիգորյանի կողմից դիմումին և բացատրությանը կից ներկայացված Facebook սոցիալական կայք-էջի քաղվածքներում Yervand Varosyan տվյալներով օգտատերի անվան դիմաց առկա են «Կարելի է միայն հպարտանալ նրանով, որ քո դեմ որոշ չորքոտանիներ ճղճիմ հոդվածներ են պատվիրում (հատկապես պնդուկ ուղեղով չորքոտանիները): Դա նշանակում է, որ դու ճիշտ ուղու վրա ես» և «Մեկ էլ կայֆ ա, որ քեզնից հղիներով հավաքվում ու նյութի տակ լայքադրսևորվում են)))» արտահայտությունները:

Հաշվի առնելով, որ Պատասխանող Ե.Վարոսյանի կողմից բացատրություն չի ներկայացվել, ուստի հնարավոր չէ եզրակացնել, թե Yervand Varosyan տվյալներով օգտատերի անվան դիմաց առկա արտահայտությունները փաստաբան Երվանդ Վարոսյանի կողմից են կատարված, թե՝ ոչ և ում են դրանք հասցեագրված: »:

5. Գործի փաստերը՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները (ինչպես նախապատրաստողի ունեցած, այնպես էլ խորհրդի քննության ժամանակ ներկայացված), հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1) 11.06.2015թ. www.pastinfo.am լրատվական կայքում հրապարակվել է ***«Վերաքննիչ դատարանն ամբողջությամբ բավարարեց Լուսինե Սահակյանի ու Երվանդ Վարոսյանի պահանջը. նրանց պաշտպանյալն արդարացվեց»*** հոդվածը:

2) «Ֆեյսբուք» (Facebook) սոցիալական ցանցի ARMENIAN LAWYERS խմբում օգտատեր Սոնա Մաշուրյանը (Sona Mashuryan) 11.06.2015թ. ժամը 19:05 րոպեին տեղադրել է (share) վերոհիշյալ հոդվածը, որի հետ կապված ի թիվս այլոց, կատարվել են հետևյալ մեկնաբանությունները՝

- հանրային պաշտպան Թամարա Բաղդասարյանը 15.06.2015թ. ժամը 10:21 րոպեին գրառել է. *«Շնորհավորում եմ: Գործի հանգամանքները շատ ծանոթ են, այնպիսի տպավորություն է, որ հանրային պաշտպանի գրասենյակում այն քննարկվել է, հարգելի գործընկերներ սա այլ գործ է, թե……»* բովանդակությամբ մեկնաբանությունը.
- փաստաբան Երվանդ Վարոսյանը 15.06.2015թ. ժամը 10:34 րոպեին գրառել է. *«Թամարա ջան, առաջին ատյանում հանրային պաշտպան է մասնակցել… գնահատական չտամ:»*.

- հանրային պաշտպան Սյուզաննա Խչեյանը 15.06.2015թ. ժամը 11:04 րոպեին գրառել է. *«Հարգելի Երվանդ, ես նույնպես աշխատում եմ ՀՊԳ-ում, և այդ քրեական գործի հանգամանքներին, ինչպես նաև առաջին ատյանում մասնակցած հանրային պաշտպանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքին ամբողջությամբ ծանոթ եմ: Ի՞նչ ասել է մասնակցել է հանրային պաշտպան... գնահատականներ չտամ:»* բովանդակությամբ մեկնաբանությունը.
- փաստաբան Երվանդ Վարոսյանը 15.06.2015թ. ժամը 11:14 րոպեին կատարել է հետևյալ մեկնաբանությունը. *«Սյուզաննա ջան, ասել է այն, որ պաշտպանյալիս հետ քննարկում եմ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով Փաստաբանների պալատ դիմելու խնդիրը:»*:

3) 2015թ. հուլիսի սկզբին Պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանին է դիմել հանրային պաշտպան Լիանա Գրիգորյանը՝ խնդրելով իրեն օգնել մամուլում հրապարակված *«Վերաքննիչ դատարանն ամբողջությամբ բավարարեց Լուսինե Սահակյանի ու Երվանդ Վարոսյանի պահանջը. նրանց պաշտպանյալն արդարացվեց»* հոդվածի հետ կապված իր դիրքորոշումը հասարակությանն ու փաստաբանական համայնքի մյուս գործընկերներին հասցնելու համար:

4) Պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանի միջոցով «xnews.am լրատվական կայքի աշխատակից՝ լրագրող Փայլակ Ֆահրադյանը 06.07.2015թ. xnews.am լրատվական կայքում տեղադրել է *«Փաստաբաններն իրարից հաղթանակնե՞ր են «գողանում»»* նյութը, որը պարունակել է ֆեյսբուքյան հարթակում կատարված գրառումները:

5) «Փաստաբաններն իրարից հաղթանակներ են գողանում» նյութը Անի Հարությունյան օգտատիրոջ կողմից 06.07.2015թ., ժամը 18:15 տեղադրվել է Armenian lawyers խմբում, որի տակ առնվազն 15 անձ հավանել (լայք) կոճակն են սեղմել:

6) Երվանդ Վարոսյանի կողմից ֆեյսբուքում 06.07.2015թ. ժամը 19:51-ին կատարվել են հետևյալ գրառումները՝ «*Կարելի է միայն հպարտանալ նրանով, որ քո դեմ որոշ չորքոտանիներ ճղճիմ հոդվածներ են պատվիրում (հատկապես պնդուկ ուղեղով չորքոտանիները): Դա նշանակում է, որ դու ճիշտ ուղու վրա ես*» և «*Մեկ էլ կայֆ ա, որ քեզնից հոիներով հավաքվում ու նյութի տակ լայքադրսևորվում են)))*»:

7) 24.07.2015թ. www.pastinfo.am լրատվական կայքում ***«Պաշտպանը համաձայնել է, որ չհրապարակվի պաշտպանյալին արդարացնող ցուցմունքը՝ պաշտպանյալը բողոք է ներկայացրել նախկին պաշտպանի դեմ»*** վերտառությամբ հոդվածը, որտեղ ներկայացվել է Արմեն Ավանեսյանի բողոքն ուղղված Պալատի նախագահին՝ Լիանա Գրիգորյանի վերաբերյալ:

8) Երվանդ Վարոսյանը 17.12.2015թ. Մարտուն Փանոսյանին հայտնած բացարկի տեքստում հետևյալ միտքն է ներկայացրել՝ «*Ավելին՝ պետք չէ մոռանալ նաև այն հանգամանքը, որ թեև սույն վարույթով պատասխանող եմ ներգրավված միայն ես, սակայն այս ամենի սկզբնաղբյուր հոդվածը պատվիրվել էր մեր երկուսի [Երվանդ Վարոսյանի և Լուսինե Սահակյանի] դեմ*»:

9) Երվանդ Վարոսյանը 17.12.2015թ. նիստի ժամանակ խուսափել է խորհրդի անդամների հարցերին պատասխանելուց, իսկ դիմողի ներկայացուցչի

հարցին պատասխանելով նշել է, որ ինքը երբեմն գրում է «Երվանդ Վարոսյան» (Yervand Varosyan) օգտատիրոջ անվան տակ:

*Վերը նշված փաստերը հաստատվել են կարգապահական գործում գտնվող գրավոր ապացույցներով, մասնավորապես՝ Պալատի աշխատակազմի ղեկավարի 29.10.2015թ. «ՀՀ փաստաբանների պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին» թիվ 206-Ա հրամանով (**գ.թ. 104-118**), Armenian lawyers խմբում Լիանա Գրիգորյանի կողմից 16.10.2015թ. կատարված գրառումով (**գ.թ. 102-103**), ֆեյսբուքյան հարթակից տպագրված Երվանդ Վարոսյանի գրառման նյութով (**գ.թ. 5**), «Փաստաբաններն իրարից հաղթանակներ են գողանում» նյութով (**գ.թ. 3-4**), ինչպես նաև դիմողի բացատրություններով, պատասխանողի բացատրություններով և բացարկի գրությամբ (**գ.թ. 98-99**):*

* * *

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի 16.12.2015թ. տեղեկանքի համաձայն՝ Երվանդ Վարոսյանը փաստաբանական գործունեության թիվ 776 արտոնագիրը ստացել է 19.10.2007թ. և 2007-2015թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 2 անգամ հարուցվել են կարգապահական վարույթներ (հաշվի առնված չէ սույն վարույթը), որոնցից մեկով՝ խորհրդի 17.05.2010թ. թիվ 12/1 որոշմամբ վարույթը կարճվել է, իսկ երկրորդով՝ խորհրդի 09.10.2015թ. թիվ ԿԳ/145-Ա որոշմամբ Երվանդ Վարոսյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Երկրորդ որոշումը դեռ ուժի մեջ մտած չէ, քանի որ բողոքարկվել է դատական կարգով:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը

Գնահատելով գործում առկա ապացույցները, խորհուրդը գտնում է, որ փաստաբան Երվանդ Վարոսյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության՝ հետևյալ պատճառաբանությամբ:

7.1. Երվանդ Վարոսյանի կողմից հայտնված բացարկների մասին տեղեկություններ

Պատասխանող Երվանդ Վարոսյանը 17.12.2015թ. խորհրդի անդամներ Մարտուն Փանոսյանին, Մելանյա Առուստամյանին, Սիմոն Բաբայանին և Կարեն Մեժլումյանին հայտնել է բացարկներ: Նելլի Հարությունյանի մասով հայտնված բացարկից Երվանդ Վարոսյանը հրաժարվել է:

Բացարկի հիմքում Երվանդ Վարոսյանն, ըստ էության, դրել է այն հանգամանքը, որ խորհրդի նշված անդամները, բացի խորհրդի անդամ հանդիսանալուց միաժամանակ տարբեր պաշտոններ են զբաղեցնում փաստաբանների պալատում, փաստաբանական դպրոցում և հանրային պաշտպանի գրասենյակում: Երվանդ Վարոսյանը գտել է, որ Պալատի նախագահը առնչություն ունի նշված հոդվածին:

Պալատի խորհուրդը Վարույթի կարգին համապատասխան քննարկելով

հայտնված բացարկները, դրանք մերժել է:

Պալատի խորհուրդը հարկ է համարում նաև ընդգծել իր դիրքորոշումը սույն որոշման մեջ:

Վարույթի կարգի 8-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ *կարգապահական վարույթն իրականացնելու կամ կարգապահական տույժ նշանակելու մասին հարցի քննարկմանը և քվեարկությանը չի կարող մասնակցել Պալատի խորհրդի այն անդամը կամ Նախապատրաստողը, որը՝ .. կան այլ հանգամանքներ, որոնք հիմք են տալիս համարելու, որն անուղղակի կամ անուղղակի շահագրգռված է տվյալ գործի ելքով*:

Պալատի խորհուրդը հարկ է համարում արձանագրել, որ Պալատի նախագահի առնչությունը 06.07.2015 թվականին xnews.am-ում հրապարակված «Փաստաբաններն իրարից հաղթանակներ են գողանում» նյութին որևէ ապացույցով չի հաստատվել և Երվանդ Վարոսյանի փաստարկներն այդ առումով անհիմն են: Նշված հոդվածին առնչություն ունեցել են փաստաբան Լիանա Գրիգորյանը և Պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանը: Վերջինս Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից ենթարկվել է կարգապահական պատասխանատվության:

Հետևաբար, Պալատի խորհուրդը գտնում է, որ նշված հոդվածը որևէ կերպ չի առնչվում Պալատի նախագահի անձի հետ և Պալատի նախագահի դիրքորոշումը նշված գործին դրսևորվել է ի պաշտոնե, կարգապահական վարույթ հարուցելու վարքագծով՝ դիմող Լիանա Գրիգորյանի դիմումի հիման վրա: Ավելին, վարույթ հարուցելուց բացի Պալատի նախագահը կարգապահական վարույթի վրա ազդելու որևէ լիազորություն չունի:

Պալատի խորհրդի անդամներ Կարեն Մեժլումյանը և Սիմոն Բաբայանը Պալատից (այդ թվում՝ Պալատի նախագահից) աշխատանքային կախվածության մեջ չեն գտնվում: Նրանք և մյուս խորհրդի անդամները փաստաբանների **ընդհանուր ժողովի կողմից ընտրված խորհրդի անդամներ են** և անկախորեն իրականացնում են իրենց լիազորությունները: Պալատի նախագահը որևէ լիազորություն չունի խորհրդի անդամի լիազորությունը դադարեցնելու հարցում:

Կարեն Մեժլումյանը 14.05.2014 թվականից հասարակական հիմունքներով հանդիսանում է Պալատի նախագահի տեղակալը՝ որակավորման և մասնագիտական վերապատրաստման գծով, առանց աշխատանքային պարտականությունների, այդ թվում՝

- Պալատում չունի աշխատասենյակ,
- Չի ստանում աշխատավարձ,
- Պալատի և իր միջև այդ մասով չկա կնքված աշխատանքային պայմանագիր,
- Չի ենթարկվում աշխատանքային կամ վերադասային հանձնարարականների:

Կարեն Մեժլումյանը, Պալատի նախագահի բացակայության դեպքում, խորհրդի նիստերն է նախագահում, ինչպես նաև որակավորման քննությունների գծով բողոքների դեպքում՝ նախագահում է խորհրդի նիստերը: Որևէ կախվածություն չունի Պալատի նախագահից:

Սիմոն Բաբայանը չի հանդիսանում Պալատի աշխատակից: Նա՝

- Պալատում չունի աշխատասենյակ,
- Չի ստանում աշխատավարձ,
- Պալատի և իր միջև այդ մասով չկա կնքված աշխատանքային պայմանագիր,
- Չի ենթարկվում աշխատանքային կամ վերադասային հանձնարարականների:

Սիմոն Բաբայանը հանդիսանում է ՀՀ փաստաբանական դպրոց հիմնադրամի տնօրեն: Փաստաբանական դպրոցի հիմնադիրը Պալատն է, սակայն վերջինս Փաստաբանական դպրոցի անդամը չէ, քանի որ հիմնադրամը անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է:

«Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *հիմնադրամ է համարվում քաղաքացիների և (կամ) իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և **անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպությունը**, որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, բնապահպանական և (կամ) այլ հանրօգուտ նպատակներ*:

ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենին նշանակում և ազատում է դպրոցի կառավարման խորհուրդը, որը կազմված է 6 անդամից՝ Պալատի նախագահ, չորս փաստաբաններ և ՀՀ արդարադատության նախարարության մեկ ներկայացուցիչ:

Փաստաբանական դպրոցի տնօրենը հանդիսանում է գործադիր մարմնի ղեկավարը և Պալատի նախագահից որևէ կախվածություն չի կարող ունենալ:

Մարտուն Փանոսյանը, հանդիսանում է Պալատի աշխատակիցը, և իր աշխատանքային պարտականությունները կատարում է մինչև ժամը 18.00-ն: Որպես խորհրդի անդամ Մարտուն Փանոսյանն ազատ և անկախ է Պալատի նախագահից: Ավելին, Պալատի աշխատակիցների աշխատավարձերի չափերը՝ հաստիքացուցակով հաստատում է Պալատի խորհուրդը: Մարտուն Փանոսյանը Պալատի աշխատակից է հանդիսացել **մինչև Արա Զոհրաբյանի պաշտոնավարումը** և անորոշ աշխատանքային պայմանագրի հիմքով շարունակել է իր աշխատանքային գործառույթներն իրականացնել:

Մելանյա Առուստամյանին Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար է նշանակել Պալատի խորհուրդը: Պալատի նախագահը միայն կարող է առաջարկել թեկնածություն, սակայն նշանակման լիազորությունը պատկանում է խորհրդին: ՀՊԳ ղեկավարի աշխատավարձի չափը սահմանվում է օրենքով և ոչ պալատի նախագահը և ոչ էլ խորհուրդը չափի փոփոխման մասով լիազորություն չունեն:

Պալատի կանոնադրության 21.8 կետի համաձայն՝ *հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել փաստաբանների պալատի նախագահի ներկայացմամբ **Փաստաբանների պալատի խորհրդի կողմից՝ խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով**, եթե՝*

1) նա մահացել է.

2) նրա փաստաբանական գործունեությամբ զբաղվելու արտոնագիրը դադարեցվել կամ կասեցվել է.

3) ժամանակավոր անաշխատունակության հետևանքով ավելի քան երկու ամիս աշխատանքի չի ներկայացել.

4) առանց հարգելի պատճառների առնվազն երկու անընդմեջ օր աշխատանքի չի ներկայացել կամ մեկ ամսվա ընթացքում երեք աշխատանքային օր չի ներկայացել աշխատանքի..

5) պատշաճ չի կազմակերպում հանրային պաշտպանների աշխատանքը և Փաստաբանների պալատի նախագահի գրավոր նախազգուշացումը ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում չի վերացրել թերությունները կամ խախտումները.

6) Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում:

Պալատի ՀՊԳ ղեկավարն ունի աշխատանքային երաշխիքներ և կախված է խորհրդից ու ոչ թե՝ պալատի նախագահից:

7.2. Կարգապահական պատասխանատվության հարցը

Կարգապահական վարույթը հարուցվել է Կանոնագրքի 2.2.3 և 5.2.1 (1) ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

Պալատի խորհուրդը սույն կարգապահական գործով էական է համարում հետևյալ իրավական հարցերի պատասխանները ստանալ՝

Ա) «*Կարելի է միայն հպարտանալ նրանով, որ քո դեմ որոշ չորքոտանիներ ճղճիմ հոդվածներ են պատվիրում (հատկապես պնդուկ ուղեղով չորքոտանիները): Դա նշանակում է, որ դու ճիշտ ուղու վրա ես*» և «*Մեկ էլ կայֆ ա, որ քեզնից հղիներով հավաքվում ու նյութի տակ լայքադրսևորվում են)))*» արտահայտությունների գրառումները (**այսուհետ՝ Գրառումները**) արդյո՞ք կատարել է փաստաբան, խորհրդի անդամ Երվանդ Վարոսյանը, թե՞՝ ոչ.

Բ) Գրառումները հրապարակայի՞ն են, թե՞՝ ոչ.

Գ) Գրառումները կարո՞ղ են վնասել փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը, թե՞՝ ոչ.

Դ) Գրառումները վերաբերու՞մ են կոնկրետ փաստաբանին կամ փաստաբաններին, թե՞՝ ոչ:

Ա. Գրառումներն արդյո՞ք կատարել է փաստաբան, խորհրդի անդամ Երվանդ Վարոսյանը, թե՞՝ ոչ.

Կարգապահական գործում գտնվող ֆեյսբուքյան հարթակից տպագրված նյութից (**գ.թ. 57**) հետևում է, որ Գրառումների հեղինակը նշված է Yervand Varosyan (Երվանդ Վարոսյան) օգտատերը:

Նշված նյութը ներկայացրել է դիմող Լիանա Գրիգորյանն իր դիմումին կից (**գ.թ. 38**)՝ ըստ կից ցանկի 3-րդ կետի, այն գրառվել է որպես՝ «Քաղվածք Երվանդ Վարոսյանի Facebook սոցիալական ցանց էջից»:

Այն, որ Yervand Varosyan օգտատերը հանդիսանում է փաստաբան, խորհրդի անդամ Երվանդ Վարոսյանը հաստատվում է նաև Երվանդ Վարոսյանի բացատրությամբ, երբ ի պատասխան դիմողի ներկայացուցչի, թե ընդունեցիք, որ օգտատերը [Yervand Varosyan] դուք եք, Երվանդ Վարոսյանը հայտնել է՝ ***երբեմն***

ես ֆեյսբուքում գրում եմ էդ օգտատերի անվան տակ:

Այսպիսով, Պալատի խորհուրդը հաստատված է համարում այն հանգամանքը, որ Գրառումները կատարել է փաստաբան, խորհրդի անդամ Երվանդ Վարոսյանը:

Երվանդ Վարոսյանի՝ խորհրդի ժամանակ ներկայացված այն տեսակետը, թե այդ գրառումները կարող էին տեսնել միայն իր ֆեյսբուքյան ընկերները հանդիսացող անձինք, մինչդեռ Լիանա Գրիգորյանը իր ընկերը չէ, Պալատի խորհուրդը էական չի համարում, քանի որ հանրահայտ փաստ է, որ ֆեյսբուքյան գրառումները կարող են կատարվել ինչպես ընկերների տեսանելիության համար, այնպես էլ՝ բոլորի հասանելիության համար: Եվ այս կարգավորումները կարելի է ցանկացած ժամանակ փոփոխել՝ ընկերների հասանելիությունը դարձնել բոլորի համար հասանելի և՝ հակառակը: Հատկանշական է, որ ֆեյսբուքյան ընկերների տիրույթում նյութի տարածումը չի արգելում որևէ ընկերոջ կողմից այդ նյութի վերատարածումը:

Պալատի խորհուրդը հարկ է համարում անդրադառնալ նաև Գրառումների մեջ նշված «քո» կամ «քեզնից» անձնական դերանունի օգտագործմանը և ճշտել հետևյալ հարցը՝ արդյո՞ք Գրառումներում Երվանդ Վարոսյանը նկատի է ունեցել ինքն իրեն: Գրառումների բովանդակությունից (այդ թվում՝ համատեքստից) ակնհայտ հետևում է, որ Երվանդ Վարոսյանը, որպես հեղինակ տեքստում «քո» դերանունն օգտագործելիս նկատի է ունեցել ինքն իրեն: Դա հաստատվում է նաև խորհրդի անդամ Կարեն Մեժլումյանի հետ նրա հարց ու պատասխանից, երբ Կ.Մեժլումյանի՝ «***Ես Ձեզ [ֆեյսբուքով] ընկերանալու հայտ տվեցի, պարոն Վարոսյան հարցին»*** ի պատասխան Երվանդ Վարոսյանը նշել է «***Շնորհակալություն: Ես պարոն Վարոսյանի հետ էդ հարցը կքննարկեմ***»: Պալատի խորհուրդն արձանագրում է, որ Երվանդ Վարոսյանն ինքն իր մասին խոսում էր երրորդ դեմքով և կարծես գործ ուներ երկու անձի հետ, որոնցից մեկը [1-ին մարդ]՝ Երվանդ Վարոսյանը պետք է քննարկեր հարցը մյուս անձի [2-րդ մարդ]՝ Երվանդ Վարոսյանի հետ: Պալատի խորհուրդը չի քննարկում նման վերաբերմունք արտահայտողի հոգեբանական դրդապատճառները և սահմանափակվում է միայն իրավական գնահատական տալով հիշյալ արտահայտությանը:

Բ. Գրառումները հրապարակայի՞ն են, թե՞՝ ոչ.

Պալատի խորհուրդը գտնում է, որ հրապարակային կարող է համարվել երկու և ավելի անձի ներկայությամբ կամ հասանելիությամբ կատարված կամ գրառված արտահայտությունները:

Գրառումները կատարվել են Երվանդ Վարոսյանի ֆեյսբուքյան էջում և հասանելի են եղել երկու և ավելի անձանց համար: Նշված Գրառումներին ծանոթացել են առնվազն 44 անձ (**գ.թ. 57**):

Այս պայմաններում, Պալատի խորհուրդը հաստատված է համարում Գրառումների հրապարակային հանդիսանալու փաստը:

Գ. Գրառումները կարո՞ղ են վնասել փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը, թե՞՝ ոչ.

Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը սահմանում է փաստաբանի վարքագծի կանոնները և փաստաբանական էթիկայի սկզբունքները:

Կանոնագրքի 1.2-րդ կետի համաձայն՝ *Մասնագիտական գործունեության սկզբունքները ձևավորվել են Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից, երաշխավորելու փաստաբանի պատշաճ գործունեությունը, ինչին բոլոր քաղաքակիրթ հասարակությունները կարևոր նշանակություն են տալիս: Սկզբունքների ձևավորման համար կարևոր նշանակություն են ունեցել Հայաստանի Հանրապետության փաստաբանների կողմից ձևավորված ավանդույթները, ինչպես նաև Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի կողմից սահմանած «Եվրոպայի փաստաբանների համար վարքագծի կանոնագրքի» դրույթները: Փաստաբանի կողմից այդ սկզբունքների ոչ ճիշտ կիրառումը կարող է հանգեցնել կարգապահական տույժերի*:

Պալատի խորհուրդն արձանագրում է, որ փաստաբանը ունենալով քաղաքացու իրավունքներ, ազատություններ և կրելով քաղաքացու համար նախատեսված պարտականություններ, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով (**այսուհետ՝ Օրենք**) և Կանոնագրքով ենթարկվում է լրացուցիչ սահմանափակումների: Նշված սահմանափակումներն անհրաժեշտ են փաստաբանի, որպես մասնագետի՝ երաշխավորելու անկախությունը, իրավաբանական օգնության որակը, ինչպես նաև հասարակության մեջ բարձրացնելու մասնագիտության հեղինակությունը:

Կանոնագրքի 2.2.3 ենթակետը սահմանում է հետևյալ վարքագծի կանոնը՝ *մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը*:

Այս կանոնից հետևում է, որ փաստաբանն իր մասնագիտական, հրապարակախոսական կամ այլ բնագավառում գործունեությամբ չպետք է դրսևորի այնպիսի վարքագիծ, որը կարող է երրորդ անձանց մոտ փաստաբանի կոչման նկատմամբ հարգանքի բացակայություն (նվազեցում) առաջացնել:

Այս տեսանկյունից ելնելով, Պալատի խորհուրդը գտնում է, որ Գրառումներին առնչվող Երվանդ Վարոսյանի վարքագիծը հակասում է Կանոնագրքի 2.2.3 ենթակետի պահանջին, քանի որ՝

- Գրառումները պարունակում են վիրավորական արտահայտություններ և բացասական իմաստով են բնութագրում Ե.Վարոսյանի համար հայտնի կամ անհայտ հասցեատերերին.
- 06.07.2015 թվականին xnews.am-ում հրապարակված «Փաստաբաններն իրարից հաղթանակներ են գողանում» վերնագրով նյութն առնչվում է Երվանդ Վարոսյանին և նրա մասնագիտական գործունեությանը (**գ.թ. 60-61**).
- Գրառումներն առնչվում են 06.07.2015 թվականին xnews.am-ում հրապարակված «Փաստաբաններն իրարից հաղթանակներ են

գողանում» վերնագրով նյութին կամ առնվազն այդպիսի տպավորություն կարող են թողնել.

- Գրառումները և 06.07.2015 թվականին xnews.am-ում հրապարակված «Փաստաբաններն իրարից հաղթանակներ են գողանում» վերնագրով նյութը առնչվում են Երվանդ Վարոսյանի՝ փաստաբանական գործունեությանը:

«***Կարելի է միայն հպարտանալ նրանով, որ քո դեմ որոշ չորքոտանիներ ճղճիմ հոդվածներ են պատվիրում (հատկապես պնդուկ ուղեղով չորքոտանիները): Դա նշանակում է, որ դու ճիշտ ուղու վրա ես***» և «***Մեկ էլ կայֆ ա, որ քեզնից հղիներով հավաքվում ու նյութի տակ լայքադրսևորվում են)))***» գրառումները կարդացող չեզոք դիտորդը կարող է ընկալել, որ փաստաբան, խորհրդի անդամ Երվանդ Վարոսյանը իրեն առնչվող հոդվածի առնչությամբ վիրավորական արտահայտություններ է թույլ տալիս: Հատկանշական է, որ ֆեյսբուքյան Armenian lawyers բաց խմբում տեղադրված «Փաստաբաններն իրարից հաղթանակներ են գողանում» վերնագրով նյութի տակ առնվազն 15 անձ հավանել (լայք) կոճակն են սեղմել (**գ.թ. 56**):

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբանը չի կարող իրեն թույլ տալ հրապարակայնորեն նման արտահայտություններ կատարել, այդ թվում նշել՝ ***քեզնից հղիներով հավաքվում ու նյութի տակ լայքադրսևորվում են***, այն դեպքում, երբ այդ արտահայտությունները չեզոք դիտորդների կողմից կարող են ընկալվել, որպես վիրավորական խոսքեր ուղղված այլ փաստաբաններին: Այս արտահայտությունները հարիր չէ փաստաբանին, առավել ևս խորհրդի անդամին, ով կոչված է կարգապահական գործերին մասնակցել, այդ թվում՝ նախագահել, ու կիրառել Կանոնագիրքը:

Այն, որ Գրառումներն առնչվում են 06.07.2015 թվականին xnews.am-ում հրապարակված «Փաստաբաններն իրարից հաղթանակներ են գողանում» վերնագրով նյութին կամ առնվազն այդպիսի տպավորություն կարող են թողնել, հաստատվում է հետևյալ ապացույցներով՝

- Սոնա Մաշուրյան օգտատիրոջ կողմից 11.06.2015թ. հրապարակված Վերաքննիչ դատարանն անմեղ ճանաչեց և արդարացրեց վերնագրով նյութը (**գ.թ. 62-71**) առնչվել է Լուսինե Սահակյանի և Երվանդ Վարոսյանի կողմից վարվող քրեական գործին (վստահորդ Արմեն Ավանեսյան): Նշված նյութի տակ շնորհավորանքներից բացի բանավեճ է տեղի ունեցել, որի մասնակիցներն են եղել փաստաբան Երվանդ Վարոսյանը, փաստաբաններ՝ Թամար Բաղդասարյանը, Մարինե Ֆարմանյանը, Լիանա Գրիգորյանը, Սուզաննա Խչեյանը և այլոք:
- 06.07.2015 թվականին xnews.am-ում հրապարակված «Փաստաբաններն իրարից հաղթանակներ են գողանում» նյութից (**գ.թ. 60-61**) հետևում է, որ այն վերաբերում է Armenian lawyers բաց խմբում փաստաբանների միջև վերոհիշյալ բանավեճին: Նշված նյութը հրապարակվել է Անի Հարությունյան օգտատիրոջ կողմից 06.07.2015թ., ժամը 18:15:
- Երվանդ Վարոսյանի կողմից ֆեյսբուքում 06.07.2015թ. ժամը 19:51-ին կատարված Գրառումները (**գ.թ. 57**), որով վերջինս վիրավորական

արտահայտություններ է թույլ տալիս իր դեմ հոդված պատվիրողներին և «լայքադրսևորվածներին»:

- Երվանդ Վարոսյանը 17.12.2015թ. Մարտուն Փանոսյանին հայտնած բացարկի (**գ.թ. 98-99**) տեքստում հետևյալ միտքն է ներկայացրել՝ «*Ավելին՝ պետք չէ մոռանալ նաև այն հանգամանքը, որ թեև սույն վարույթով պատասխանող եմ ներգրավված միայն ես, սակայն այս ամենի սկզբնաղբյուր հոդվածը պատվիրվել էր մեր երկուսի [Երվանդ Վարոսյանի և Լուսինե Սահակյանի] դեմ*»:

Բացի այս ապացույցներից, Պալատի խորհուրդը նշված փաստերը հաստատված է համարում նաև Վարույթի կարգի 15-րդ հոդվածի 3-րդ մասի կանոնի կիրառմամբ, ըստ որի՝ *եթե կողմը հրաժարվում է (խուսափում է) պատասխանել Նախապատրաստողի հարցերին կամ բացատրություններ տալ, ապա Նախապատրաստողը մյուս կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ կարող է անհիմն համարել կողմի հրաժարվելը (խուսափելը) պատասխանից և բացատրություններից, իսկ* ***<u>գործի այն փաստական հանգամանքները, որոնց վերաբերյալ կողմը հրաժարվում (խուսափում) է բացատրություն կամ պատասխան տալուց, կարող է համարել ապացուցված</u>****: Ամեն դեպքում պատասխանից կամ բացատրությունից Նախապատրաստողի կողմից որպես անհիմն գնահատված հրաժարումը (խուսափումը) մեկնաբանվում է ի վնաս հրաժարվողի (խուսափողի): Սույն կանոնը կարող է կիրառել նաև Պալատի խորհուրդը*:

Պալատի խորհրդի նիստի ժամանակ, Երվանդ Վարոսյանը հրաժարվել է բացատրություն տալուց և հարցերին պատասխանելուց, ինչը դրսևորվել է նաև հետևյալ երկխոսության միջոցով՝

Երվանդ Վարոսյան- *ասեմ, որ ձեր հարցերին չեմ պատասխանելու, ոչ ձեր ժամանակը խլելու ցանկություն ունեմ, ոչ բան.*

Խորհրդի անդամ Նելլի Հարությունյան- *երկու հարց ունեմ, ամենակարևոր հարցեր.*

Երվանդ Վարոսյան- *Դուք հարց կտաք ինձ, էս գրառումը դուք եք գրել, թե՝ ոչ.*

Նելլի Հարությունյան- *այո.*

Երվանդ Վարոսյան- *պատասխանեմ, չեմ պատասխանի, մեռնեմ օրենքին.*

Նելլի Հարությունյան- *դա էլ է պատասխան.*

Երվանդ Վարոսյան- *եթե դուք եք գրել, արդյոք նկատի եք ունեցել հոդվածներ ասելով այն հոդվածը, էտ էլ կարող եք հարցնել, պատասխան- չեմ պատասխանում:*

Վերոհիշյալ հարց ու պատասխանից պարզ է դառնում, որ պատասխանող Երվանդ Վարոսյանը խուսափել է երկու փաստական հանգամանքներին առնչվող առնվազն հետևյալ երկու հարցից, որոնք ինքն էլ հնչեցրել է՝

- Գրառումը Երվանդ Վարոսյանն է գրել,
- Գրառման մեջ նկատի է ունեցել xnews.am-ում հրապարակված «Փաստաբաններն իրարից հաղթանակներ են գողանում» հոդվածը, թե՝ ոչ:

Պալատի խորհուրդը Վարույթի կարգի 15-րդ հոդվածի 3-րդ մասի

կիրառմամբ հաստատված է համարում այն փաստերը, որ՝ (i) Գրառումները կատարվել են Երվանդ Վարոսյանի կողմից, և (ii) Գրառումների մեջ Երվանդ Վարոսյանը նկատի է ունեցել xnews.am-ում հրապարակված «Փաստաբաններն իրարից հաղթանակներ են գողանում» հոդվածը:

Դ. Գրառումները վերաբերու՞մ են կոնկրետ փաստաբանին կամ փաստաբաններին, թե՞՝ ոչ:

Լիանա Գրիգորյանը և նրա ներկայացուցիչ փաստաբան Թամարա Բաղդասարյանը գտել են, որ Գրառումները վերաբերել են Լիանա Գրիգորյանին:

Դիմողի՝ «*Նշեմ, որ ես որևէ կապ չունեմ «Փաստաբաններն իրարից հաղթանակնե՞ր են գողանում» հրապարակման հետ: Սակայն գտնում եմ, որ Պալատի խորհրդի անդամ, փաստաբան Երվանդ Վարոսյանը իր գրառմամբ և մեկնաբանությամբ խախտել է Փաստաբանի վարքագծի կանոնագրքի դրույթները: Փաստորեն սեփական կարծիք արտահայտելու, այն է գրառման տակ հավանելու համար, ըստ Երվանդ Վարոսյանի՝ «Մեկ էլ կայֆ ա, որ քեզնից /հավանաբար նկատի ունի իրենից/ հղիներով հավաքվում ու նյութի տակ լայքադրսևորվում են»*», ինչպես նաև «*Վստահ եմ, որ այդ խոսքերն ինձ են ուղղված, քանի որ ես էի խնդրել պալատի մամուլի խոսնակին ARMENIAN LAWVERS Երվանդ Վարոսյանի և իմ երկխոսությանը ներկայացնել հանրությանը: Ես կայքի ընտրության հետ կապ չունեմ, բայց հոդվածից պարզ էր, որ ես եմ հոդվածի հեղինակը:*» մտքերի մեջ Երվանդ Վարոսյանը որոշակի հակասություն է տեսել, ինչն արտահայտվել է նրա կողմից դիմողի ներկայացուցչին ուղղված հարցապնդումներով:

Պալատի խորհուրդը հաշվի առնելով Լ.Գրիգորյանի դիմումը, Պալատի աշխատակազմի ղեկավարի 29.10.2015թ. «ՀՀ փաստաբանների պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին» թիվ 206-Ա հրամանը, Armenian lawyers խմբում Լիանա Գրիգորյանի կողմից 16.10.2015թ. կատարված գրառումը և դիմողի ներկայացուցիչ Թամարա Բաղդասարյանի պարզաբանումները, գտնում է, որ փաստաբան Լիանա Գրիգորյանն իրեն է վերագրել Երվանդ Վարոսյանի կողմից նշված վիրավորական արտահայտությունները, իսկ «*ես որևէ կապ չունեմ «Փաստաբաններն իրարից հաղթանակնե՞ր են գողանում» հրապարակման հետ*» միտքը ներկայացնելով, վերջինս նկատի է ունեցել, որ միայն նյութը հրապարակելու գործողության հետ կապ չունի, ինչը սահմանափակվում է լրատվական կայքի ընտրությամբ: Իսկ, որ Լիանա Գրիգորյանը կապ ունի նշված նյութի հետ և դա իր նախաձեռնությամբ է ի հայտ եկել Պալատի մամուլի խոսնակի օժանդակությամբ, Պալատի խորհուրդը նույնպես հաստատված է համարում:

Կանոնագրքի 5.2.1 (1) ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը չպետք է թույլ տա այլ փաստաբանի նկատմամբ արժանապատվությունը և փաստաբանի համբավն արատավորող գործողություններ ու արտահայտություններ*:

Այս վարքագծի կանոնը՝ հարուցված վարույթի շրջանակներում կիրառելու համար, Պալատի խորհուրդը պետք է համոզված լինի, որ Գրառումների հասցեատերը դիմողն է կամ կոնկրետ այլ փաստաբան:

Հատկանշական է, որ 06.07.2015 թվականին xnews.am-ում

հրապարակված «Փաստաբաններն իրարից հաղթանակներ են գողանում» նյութը տեղադրվել է 06.07.2015թ., ժամը 18:15, իսկ Երվանդ Վարոսյանի կողմից ֆեյսբուքում Գրառումները կատարվել են 1 ժամ 36 րոպե հետո՝ ժամը 19:51-ին: Երվանդ Վարոսյանը օբյեկտիվորեն 06.07.2015թ. ժամը 19:51-ին կարող էր չիմանալ նշված հոդվածի հետ Լիանա Գրիգորյանի և Հայկ Հակոբյանի առնչությունը, որը Երվանդ Վարոսյանին հասանելի է եղել միայն Պալատի նախագահի 12.08.2015 թվականի կարգապահական վարույթ հարուցելուց հետո՝ դիմողի 04.08.2015թ. դիմումի բովանդակությունից:

Այն, որ xnews.am-ում տեղադրված նյութի մեջ ներկայացված է Լիանա Գրիգորյանի առնչությամբ բանավեճը, չի կարող Պալատի խորհրդի համար՝ Երվանդ Վարոսյանի կողմից կոնկրետ դիմողին վիրավորելու անվիճելի ապացույց ծառայել:

Վարույթի կարգի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը*:

Վարույթի կարգի 15-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը*:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ դիմողը չապացուցեց Գրառումները իրեն հասցեագրելու փաստը (այն մնաց վիճելի), հետևաբար այդ փաստը Պալատի խորհուրդը համարում է չապացուցված:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը*:

Վերոհիշյալ նորմից ելնելով, Պալատի խորհուրդը գտնում է, որ Կանոնագրքի 5.2.1 (1) ենթակետի մասով հարուցված վարույթը՝ ենթակա է կարճման այդ մասով:

7.3. Կարգապահական տույժի ընտրությունը

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի համաձայն՝ Պալատի խորհուրդը՝ լուծում է փաստաբանին պատասխանատվության ենթարկելու և կարգապահական տույժ նշանակելու հարցը:

Վարույթի կարգի 3-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ *Կարգապահական վարույթ հարուցելու, կարգապահական վարույթն իրականացնելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործողություններն իրականացվում են Պալատի առջև՝* ***փաստաբանների հավասարության սկզբունքի հիման վրա***: Նույն հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ *Փաստաբաններին կարգապահական տույժի ենթարկելիս Պալատի խորհուրդը պարտավոր է ղեկավարվել* ***միատեսակ չափանիշներով***:

Պալատի խորհուրդն արձանագրում է, որ նշված գործառույթը իրականացնելով վերջինս լուծում է ինստիտուցիոնալ կարևորագույն խնդիր՝ ապահովում է փաստաբանների վարքագծի կանոնների միատեսակ

կիրառությունը:

Վարքագծի կանոնների կիրառումը պարտադիր և անհրաժեշտ գործոն է, քանզի փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է քաղաքացիական հասարակության ձևավորման և ժողովրդավարության ապահովման համար: Փաստաբանի վրա դրվում են բազմազան իրավական և բարոյական պարտականություններ, որոնց շարքում հատուկ տեղ է զբաղեցնում փաստաբանի մասնագիտական հեղինակությունը:

Հանդիսանալով հասարակության հատուկ սուբյեկտ՝ փաստաբանը կոչված է ապահովել անձանց իրավունքների պաշտպանությունը, դրանով իսկ լրջագույն դերակատարում ունենալով արդարադատության իրականացման աջակցման գործընթացում:

Սույն կարգապահական գործի շրջանակներում հաստատվել է, որ փաստաբան և խորհրդի անդամ Երվանդ Վարոսյանը հրապարակայնորեն Գրառումներ է կատարել՝ իրեն և Լուսինե Սահակյանին առնչվող հոդվածի առնչությամբ: Հատկանշական է, որ Պալատի խորհրդի անդամը առանձնահատուկ զսպվածություն պետք է դրսևորի, որպեսզի իր վարքագծով փաստաբանական համայնքի կամ հասարակության մոտ չթողնի անլուրջ տպավորություն, հակառակ դեպքում, անզուսպ և անպատասխանատու վարքագծով խորհրդի անդամի կողմից կարգապահական գործերի մասնակցությունը կնվազեցնի փաստաբանների վստահությունը փաստաբանական ինստիտուտի նկատմամբ:

Պալատի խորհուրդն արձանագրում է, որ Խորհրդի անդամի կողմից թույլ տված խախտումը բոլոր դեպքերում անթույլատրելի է, իսկ վերջինիս կարգավիճակը չի կարող նրան արտոնություն տալ պատասխանատվությունից խուսափելու համար, քանի որ մասնագիտական էթիկայի կանոնների պահպանման պարտականությունը խորհրդի անդամի պարագայում էլ ավելի է կարևորվում:

Այսպիսով, Պալատի խորհուրդը գտնում է, որ Երվանդ Վարոսյանը թույլ է տվել Կանոնագրքի 2.2.3 ենթակետի պահանջի խախտում:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ*:

Պալատի խորհուրդը հաշվի առնելով Երվանդ Վարոսյանի կողմից կարգապահական տույժեր չունենալու հանգամանքը (խորհրդի 09.10.2015թ. թիվ ԿԳ/145-Ա որոշումը դեռևս ուժի մեջ մտած չէ), գտնում է, որ փաստաբան Երվանդ Վարոսյանի նկատմամբ պետք է կիրառի **խիստ նկատողություն** տույժի տեսակը:

Վերոգրյալը հիմք ընդունելով և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.- րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 39.8.-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի

իրականացման կարգի» 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին և 2-րդ կետերիև 31-րդ հոդվածների պահանջներով,

Պալատի խորհուրդը,

Ո Ր Ո Շ Ե Տ՝

1. ***ՀՀ փաստաբանների պալատի նախագահի կողմից 12.08.2015 թվականի թիվ 296-Ա/ԿԳ-15164 որոշմամբ փաստաբան Երվանդ Վարոսյանի (արտոնագիր թիվ 776) նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 5.2.1. 1-ին ենթակետի պահանջների խախտման հիմքով հարուցված կարգապահական գործով վարույթը կարճել՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը հիմնավորված չլինելու հիմքով:***
2. ***Փաստաբան Երվանդ Վարոսյանին (արտոնագիր թիվ 776) ճանաչել մեղավոր Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.3 ենթակետի պահանջների խախտման համար:***
3. ***Փաստաբան Երվանդ Վարոսյանի (արտոնագիր թիվ 776) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն:***
4. ***Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբաններ Երվանդ Վարոսյանին և Լիանա Գրիգորյանին:***

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Մարտուն Փանոսյան